# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/70-Հ1
## 16.07.2025Թ.ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/70 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» «07» 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Համիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Արման Դաղունցի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2025թ հուլիսի 16-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/70 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով և ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրության ժամկետի փոփոխության անհրաժեշտությամբ, Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին գլխավոր Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Հաստատել նոր՝ փոփոխված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն Հավելված 1-ի:

2. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**2.1** Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

**2.2** Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

**2.3** Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**2.4** Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 9000110018562
ՀՎՀՀ 02698732

**Գլխավոր քարտուղար՝**

____________________ **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 16
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100507450000
ՀՎՀՀ 02574465
Էլ փոստ՝ corporate-insarmeniainsurance.am

**Գլխավոր տնօրեն՝**

____________________ **Ա.Դաղունց**
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված թիվ 1*

*« 21 » « 07 » 2025թ. կնքված*

*N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/70-Հ1 համաձայնագրի*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**(ՓՈՓՈԽՎԱԾ)**

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 66511170/2 | Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ | Ծառայությունը նախատեսում է ՀՀ ԿԳՄՍՆ հաշվեկշռում հաշվառված 012LL55 պետհամարանիշով Volvo EX40 BEV (Battery Electric Vehicle), 2024թ շարժիչի հզ.՝ 300/408 ձ/ու ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը, որի արդյունքում տրամադրվելու է ԱՊՊԱ պայմանագիր:<br>Պայմանագիրը պետք է ներառի.<br>- ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրության ժամկետը, որը պետք է ուժի մեջ մտնի 23.07.2025թ. սկսած՝ 365 օրացուցային օր ժամկետով:<br>- Նշված ժամկետում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության վերաբերյալ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջները: | դրամ | 1 | 42000 | ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍՆ: | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունները մատուցել ավելի շուտ ժամկետում: |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

------------------------------ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

------------------------------ Ա.Դաղունց

(ստորագրություն)

Կ.Տ.